№ 122 ՅՈՒԼԻՍԻ 20 (ՕԳՈՍՏՈՍԻ 1) 1878 ՅՈՒԼԻՍԻ 20 (ՕԳՈՍՏՈՍԻ 1) № 122

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1878 թվից

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՕՏԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նուաճված Հայաստանը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Բերլինի դաշնագիրը։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Հայոց խնդիրը։

ՆՈՒԱՃՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԸ

—

Քանի որ ռուսները հետզհետէ նուաճում էին Հայաստանը, հայոց ազգաբնակութիւնը նուաճված երկիրներում բազմանում էր, թէ դրսից եկած հայ գաղթականների հաւաքվելուց, թէ նոյն իսկ բնիկ ժողովրդի անչափ բազմանալուց։

Ասպէս է պատահել թէ այժմեան Թիֆլիսեան նահանգի այն մասի հետ որ հայերով է բնակեցրած, թէ Էլիզավետպոլի և Երևանի նահանգի հետ։

Հայաստանի այն մասը, որ Ռուսաստանը վերջին պատերազմի ժամանակ նուաճեց Թիւրքիայից, այսինքն Ղարսի վիճակը, համեմատելով իր տարածութեան հետ, շատ քիչ է բնակեցրած հայերով։

Հայերը, ինչպէս յայտնի է, շատ լաւ երկրագործներ են, շատ աշխատասէր արուեստաւորներ և ընդունակ վաճառականներ են։ Բացի սորանից յայտնի է, որ Հայաստանի բարձրադիր տեղերում ոչ մի ազգաբնակութիւն այնքան լաւ չէ դիմանում կլիմային և այնքան չէ աճում, չէ բազմանում, որքան իրանք հայերը։ Ոչ ոք այնքան լաւ և այնքան շուտ չի ծաղկեցնի Ռուսաստանի նոր նուաճված երկիրները որքան հայերը։

Բայց այդ նոր երկիրները հայերով բնակեցնելու համար որդեօք հարկաւոր կը լինի այս անգամ էլ գաղթել տալ հայերին Թիւրքիայից կամ Պարսկաստանից, ինչպէս առաջ արեց ռուսաց կառավարութիւնը Ախալցխայի գաւառը կամ Երևանի նահանգը նուաճելու ժամանակ....

Մենք կարծում որ նոյն միջոցը հարկաւոր լինէր գործադրել և այժմ։

Անդրկովկասի մի քանի տեղերում, ինչպէս օրինակ Թիֆլիսի նահանգի Լօռու գաւառում, Երևանի նահանգի Ալէքսանդրապօլի գաւառում, և ուրիշ մի քանի տեղերում հայ երկրագործ դասը վերջին յիսուն տարվայ ընթացքում այնքան բազմացել է, որ շատ տեղ վարելու հողերը չեն բաւականանում անչափ խիտ դարձած ազգաբնակութեանը։

Մեր կարծիքով այդ իսկ տեղերից, որտեղ հայ ազգաբնակութիւնը չափից դուրս խիտ է դարձել և որտեղ վարելահողերը պակասում են, հարկաւոր կը լինէր հրաւիրել երկրագործ ազգաբնակութեան ցանկացողներին բնակվել նոր նուաճված Հայաստանի մասում։ Այսպիսով նոր երկիրներն էլ կը լցվէին աշխատասէր և ընդունակ հայ ազգաբնակութեամբ, որ կը ծաղկեցնէր այն երկիրները, և Անդրկովկասի այն տեղերը, որոնք լցված են խիտ ազգաբնակութեամբ, քիչ թէ շատ կազատվէին աւելորդ, հողի պակասութեան պատճառով գրեթէ անգործ և ապարդիւն մնացող թանգագին, աշխատող ոյժերից։

Ոչ ոք չէ կարող հերքել որ մեր երկրի բնիկ ժողովրդների ամենաընդունակ, աշխատող տարրը հայեր են և որ ոչ մի ցեղ այնքան չէ յարմարվում մեր երկիրների կլիմային, այնքան չէ ծաղկեցնում իր բնակեցրած երկիրը, այնքան

ԹԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑՈՑ ԽՆԴԻՐԸ

—

Բերլինի աւազաժողովը վերջացաւ. արևելեան խնդրին տրվեցաւ վճիռ։ Հայաստանի վերաբերմամբ մեր ունեցած ակնկալութիւնները ի դերև ելան։ Հայերին համարեա ոչինչ չը տուին։

Հայերը յոյս ունէին ստանալ ինքնավարութիւն, ստանալ իրաւունք—ունենալ սեփական ազգային դրամարկղ, իրանց պէտքերին ու պակասութիւններին լրումն տալու ազատ վարչութիւն, ազգային իրաւունքների պաշտպանութեան համար սեփական զինուորական ոյժ, մտաւոր ու տնտեսական կեանքի բարւոքման գործի մէջ անկախութիւն....

Եւրոպական աւազաժողովը մի յօդուածով այդ բոլորը քանդեց և տուաւ նրա փոխարէնը իր հնարած նոր դրութիւն։ «Temps» լրագրի թղթակցի խօսքերից այնպէս էր դուրս գալիս թէ Թիւրքիայի հաւատարմատարները ցանկացել են հայերի մասին գրված յօդուածին շատ անորոշ և բազմանիշ կերպարանք տալ և իբր թէ աւազաժողովի միւս անդամները դէմ են կացել և տուել են պարզ ու որոշ ձև։ Մենք կարծում էինք թէ յիրաւի մի շատ որոշ բան կայ. և ինչ է դուրս գալիս. «Թիւրքիան պարտաւորվում է անյապաղ կատարել այն վերանորոգութիւնները, որ պահանջում են հայաբնակ տեղերի կարիքները, ապահովել նրանց չէրկէզներից և քիւրդերից և կարգադրութիւնների մասին հաշիւ տալ եւրոպական տէրութիւններին, որոնք պէտք է հսկեն նրանց գործադրութեան վրա»—Միթէ այդ յօդուածը այն հազարաւոր անհամ և անհիւթ խոստմունքներից մէկը չը պէտք է համարել, որ այնքան առատ թափվել են հայի առաջ ամեն կողմից, երբ մի և նոյն Թիւրքիան այժմ բացարձակ ասում է, որ եւրոպական Թիւրքիան նրա անցեալն էր, իսկ Փոքր-Ասիան նրա ներկան է և ապագան պէտք է լինի։

Բայց ինչ է այն նոր դրութիւնը, որ Եւրոպան ստեղծեց հայերի համար։ Այդ դրութիւնը հասկանալը շատ կարևոր է և այժմ իսկ որոշել մեր յարաբերութիւնը դէպի այսուհետև անմահ հայոց խնդիրը անհրաժեշտ։ Միայն լաւ ուսումնասիրելով իրանց նոր վիճակը ամեն կողմից՝ հայերը կարողութիւն կունենան մարանչելու թէ ուզղութեան և թէ միջոցների յարմար դասաւորութեամբ։ Միայն կեանքի վրա ազդող պայմանների ճիշդ գնահատութեամբ՝ հայերը կարող կը լինեն մի որ և իցէ գիտակցական գործունէութիւն սկսել, որ պատշաճապէս համապատասխանէր ապագայ տնտեսական և մտաւոր զարգացման։—Խնդիրը պարզելու համար պէտք է քննվի անցեալը և համեմատվի նորի հետ։—Ռուսաստանը այժմ խօսք է տուել Անգլիային, որ այսուհետև աւելի առաջ չէ գնալու Փոքր-Ասիայում։ Այժմ Անգլիան է երևան գալիս իր քաղաքակրթութեամբ և մի և նոյն ժամանակ տնտեսական հարստահարութեան կատարելագործված եղանակներով։—Անգլիան կը ճղէ, կանցնէ Տիգրանի, Միհրդատի տիրած երկիրների միջով մինչև Միջագետք. այնտեղ նա հին քաղաքակրթութեան մնացորդների, աւերակների վրա կը հնչեցնէ իր չոգեշարժ մեքենաների ձայները. հին աշխարհի անկարգ հարստահարութեան յիշատակների վրա կը փայլեցնի աւելի զգոյշ և խորամանկ հարստահարութեան նոր դրօշակ, ատնեգործված դարուս քաղաքակրթական աշխարհների գիւտերի գործիքներով։—Այսօր թէ էգուց մեր առջև պատրաստ կը լինի Կարին-Տիգրանակերտի երկաթուղին, միւս օրը մի ուրիշը և այլն։—Բայց Անգլիան ճանաչում է միայն տնտեսական հարստահարութիւն. նա պահանջում է իրանից կախված երկիրներից միայն տնտեսական բաւականութիւն. նա սովորութիւն չունի ազգային խնդիրների մէջ խառնվել, սէր չունի շատ տեղ չը յաջողված, բայց շատ տեղ գործադրված բարոյական բռնակալութիւն քանդելու։ Նա մինչև անգամ ուրախութեամբ կը տայ իր քաղաքակրթական կեանքից այս կամ այն բարիքները, որ կը ցանկանան ընդունել նրանից։

Ահա մօտաւորապէս մեր նկարագրածի նման մի շրջան է մտնում հայոց խնդիրը։ Նա շատ ժամանակ է յղացած էր մարդկերանց մտքերում, երէկ նա ծնվեց և այսօր նա ուղի է ընկնում իր զարգացման ճանապարհով։ Նրա ծնվելու ժամանակ մենք շատ ուրախացանք, նա մեզ թուեց շատ ուժեղ և հսկայ, մեր երազագրքերը և էֆիմերիդները մեծ նախագուշակութիւններ արին նրա ապագայի մասին։ «Երազը երեք օրից յետոյ կը կատարվի» ասացին նրանք։ Ազգութեան օրերը նման չեն մեր օրերին։ Պէտք է սպասել երեք օր, երեք ամիս, թէ երեք տարի... մենք այդ չը գիտենք. բայց գուցէ բաւական է, որ մի օր ժողովրդին էլ բազդը, ցոյց տուաւ ապագայի մի շողը, զօրացրեց նրանց մէջ յոյսը, թերահաւատներին ձեռք մեկնեց և ընդհանուր օգտի առաջ լուսցրեց բոլոր կուսակցութիւնների խառնիճաղանճ ձայները։

Ի՞նչ է հայոց խնդիրը։ Ցղացաւ, ծնվեց և զարգանում է. եթէ նկատեցինք մենք և ասացինք դա դեռ չէ նշանակում թէ մենք բոլորովին և որոշեցինք նրան, ուսումնասիրեցինք նրան արտաբերող տարրերը, հետազօտեցինք նրա վրա ազդող արտաքին և ներքին ոյժերը, քննեցինք բոլոր փոփոխող պայմանների համեմատական զօրութիւնը և գնահատեցինք ամբողջ խնդիրը իր բոլոր ամփոփով ու մեծութեամբ։ Մինչդեռ այդպիսի խնդիրներում, ինչպէս հայոց խնդիրն է, ուղիղ և որոշ հասկացողութիւն ունենալը շատ ու շատ կարևոր է։ Նրանից պէտք է արմատախիլ անել բոլոր որոմները և հակաքաղաքակրթական խառնուրդները. պէտք է զտել նրան, մաքրել և նրա վրա ունեցած հայեացքների ու կարծիքների մէջ պարզութիւն դնել։ Շատ հեշտ կարելի է մի մեռած և անճոռնի բան շինել նրան և նրա տակ ծածկել մեր ծուռ ու սխալ համոզմունքների ու զգացմունքների ամբողջ կոյտը։ Շատ անկատելի կերպով կարող կը լինեն ներս սռնվիլ յետադէմ և վնասակար տարրեր, որոնք գուցէ խնդրի անորոշութեան պատճառով գրտնեն նրա թևերի տակ տեղ ու պաշտպանութիւն։ Մեծ անհրաժեշտութիւն կայ ամենին հասկացնել, որ հայոց խնդիրը ուրիշ կերպ չը պէտք է հասկանալ, այլ միայն իբրև քաղա-

շուտ չէ աճում և չէ բազմանում, որքան հայերը։

Ընդրկովկասի տնտեսական շահերը, ամբողջ պետութեան օգուտները, վերջապէս քաղաքակրթութեան ընդհանուր մարդկային նպատակը պահանջում են, որքան կարելի է, միջոց տալ հայերին, այդ աշխատասէր, գործունեայ, լուսաւորվելու և քաղաքակրթվելու ընդունակ, մի և նոյն ժամանակ հաւատարիմ ազգին՝ բազմանալ Ընդրկովկասում և Հայաստանում։

Դ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

11 յուլիսի

Մի քանի ժամանակից յետոյ Նոր-Նախիջևանի մէջ կը բացվի հայոց «տպարան», որի կարևորութիւնը վաղուց կը զգայ տեղիս հասարակութիւնը։ Այդ տպարանի սկզբնապատճառն են—ինչպէս և շատ ուրիշ գավառի ազգային գործերու—Յակոբ Խլճեանը և նրա մեծապատիւ փեսան Գրիգոր Ճղնաւորեանը։ Բացվող տպարանի վրա, առաջին նուագ, ծախս պէտք է անեն 3000 ր., և միանգամ այն պատրաստած գործառունը պարգև պէտք է անեն...

Եթէ, Աստուծով, այդ ամենաազնիւ և ամենայահաւէտ մտադրութիւնը իրագործվի, այնուհետև պ. պ. Նախիջևանցիներին (ի հարկէ հայ հասարակութիւնը պիտի հասկանալ) աննկարելի կը լինէր, եթէ նրանք իրանց հայաքնակ և հայաշէն քաղաքի մէջ չը հրատարակէին գոնէ չաբաթաթերթ մի լրագիր. իմ ակնարկութիւնս է այն չատ տարնեակ երիտասարդների վրա, որոնք չաբաթը մի թերթ չարադրելու, թարգմանելու, դատմունք անելու, բարի բարի դիտաւորութիւններ և առաջարկութիւններ անելու համար բաւական զարգացումն և դիտութիւն ունեն, և որ առաւելն է՝ այդպիսի երիտասարդների թիւը տարուց տարի չատանալու վրա է, վասն զի, այս բոպէիս, տէրութեան զանազան միջնակարգ վարժարաններումն կուսանին առաւել քան թէ 200 նախիջևանցի պատանիք,—ասել է՝ ոչ գրողի և ոչ կարդացողի պակասութիւն կայ Նախիջևանի մէջ։ Նկատելին այն է, որ Նախիջևանի մէջ անգրագէտ հայը այնպէս հազուագիւտ բան է, ինչպէս որ օրէս 15—20 տարի առաջ լուսաւորեալ, զարդացած հայը։ Կրկնում եմ, այսպիսի բարեբաղդ դիպուածին ծիծաղելի բան չէր լինի, որ Նախիջևանցին, իր 5 գիւղերով, 25 հազար միապաղաղ ժողովուրդը, չունենայ իր կենսականութիւնը և ապագայ հսկայաքայլ առաջադիմութեանը (սպասեցէք նա չուտ կը կոխէ Բոստովին, այնքան որ մենք մի հնար գտնենք ճարելու մեր գալոց բէալական վարժատան համար մի հայասէր, բանիբուն, մանկավարժ գերմանացի դիրեկտօր) և մի օրդան...

Հայոց ազգային վարժարան, հայոց տպարան, հայ լրագիր և հայոց թատրոն այնպէս հարկաւոր է Նախիջևանցիներիս, ինչպէս որ աշխարհ կազմող չորս (հիներու կարծիքով), տարրը—օդը, ջուրը հողը և կրակը։

Տպարանի մեկենասներ գտնվեցան, այժմ կը սպասենք լրագրի մեկենասներուն։ Մինթէ ժթ. դարում այս՝ հայերու դարևոր նիրհէն սթափութեան ժամանակ, Նախիջևանի երիտասարդութիւնը իր կենսականութիւնը ոչինչ բարոյական գործունէութեամբ արտայայտելու չէ։ Կասկածում ենք, չենք հաւատում։

Պ. պ. Խ. Ս. Զ. Պ. Ա. Յ. Հ. Մ. Պ. և չատ ուրիշներդ,—նայենք ձեզ։ Յոյս ունեմ, որ դուք ձեր պապերի, ազգաչէն անեցիների յիշատակը կը կենդանացնէք ձեր մէջ։ Նայեցէք, օտարների վրա մի յոյս դնէք. ուժը մէջերդ որոնեցէք. արտասահմանէն, ինչպէս որ տեսաք, ձեզ պէտքական ոյժը չեկաւ, և գալու ևս չէ։ Թէ կուզէք չառլաթանները վագոններով կուգան... Մանտա տղաքը պիլէ տէյէմիշ արել են, որ օտար խոխամը եմըտ կուտէ, կը ծռէ ու կը փախչի։ Խելքըտ ժողտէ։ Ան չէ ամա՝ չուտ պիտի խաղանք խտա թերմաշ Պամպուլիսոը, սիրտերուս եղը հալեցաւ ստպտ անելէն։

* * *

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 15 յուլիսի

Ամեն մի անհատի սրբազան պարտաւորութիւն է բողոքել այն պակասութիւնների և անգործութեանց դէմ, որոնք առաջանում են հասարակութեան ներկայացուցիչներից։ Անաղնութիւն է որ մարդս տեսնէ թէ այս կամ այն ներկայացուցիչ պարոնը հասարակութեան գործը միջոց է շինել իր անձնականութեան չահերը ու կրքերը առաջ տանելու համար և չը բողոքէ այդ անիրաւութեանց դէմ։ Աւելի ևս անաղնութիւն է այն անձի կողմից, որը տեսնելով մի արժանաւոր մարդու հասարակութեան համար անկեղծ աշխատութիւնը, սկսէ բոլորովին ի զուր տեղ իր անձնականութենից դրդած արատաւորել այդ անձի գործունէութիւնը։

Խօսքս պ. Մարտիրոս Մկրտչեանցի նամակի մասին է, որ ուղղած է տեղիս թեմական տեսչի գործունէութեան դէմ «Մշակի» 118 համարում։

Ես կարծում եմ, որ ամեն մի հասարակութեան սրբազան պարտաւորութիւն է հրապարակաւ մրոտել այն անձը որ իր վայրահաչ խօսքերով, ի բաց դնելով ճշմարտութիւնը, վշտացնում է հասարակաց գործի մէջ խղճի մտօք աշխատող արժանաւոր անձանց։ Այդպիսի պարոնները ոչ թէ միայն կարող են ազգին օգուտ բերել, այլ նրանք հասարակութենից կարող են հեռացնել ազնիւ ու աշխատող ոյժերը։

Պ. Տէր-Յովհաննիսեանցը իր ուսման ընթացքը աւարտել է Մոսկվայի արքունական համալսարանի իրաւաբանական մասում, կանդիդատ իրաւաբանութեան։ Այդպիսի իրաւունք ստացած անձանց համար համարեա թէ բոլորովին պատրաստ է արքունական ծառայութեան մէջ պատշաճաւոր պաշտօն, որից պ. Տէր-Յովհաննիսեանցը նիւթականապէս աւելի կարող էր օգուտ քաղել, քան թէ ընդունելով թեմական վերատեսչի պաշտօնը և ստանալով միայն 800 ռուբլ։ Եթէ պ. Տէր-Յովհաննիսեանցը, լինելով իրաւաբան, իր աւելի ընդարձակ ասպարէզը թողած, պարապում է մանկավարժութեամբ, դա միայն նրան պատիւ է բերում և ազգը կարող է դրանով միայն ուրախանալ և պարոնի այդ տեսակ վարմունքը ցոյց է տալի նրա անչահասիրութիւնը և ազգասիրութիւնը, նրա ազնուութիւնը ևս երևում է այն բանից որ նա դարձեալ մի ծանր և ազգօգուտ գործ է յանձն առել խմբագրութիւն «Մանկավարժական թերթի» որի առաջին համարը կարդալով ամեն մի ճշմարիտ հայ պիտի անկեղծ սրտով իր խորին շնորհակալութիւնը յայտնէ պարոնին և ոչ հայհոյէ ինչպէս որ վարվում է այժմ պ. Մկրտչեանցը։

Մեզ լաւ յայտնի է որ պ. Տէր-Յովհաննիսեանցը բոլոր սրտով նուիրված է իր յանձնած գործին։ Նա տարի ու կէս է որ յանձն է առել թեմական տեսչի պաշտօնը և քանիցս անգամ այցելել է Գանձակ, Թելաւ, Սղնախ, Ախալցխայ, Ախալքալաք, Սուրամ, Գօրի, Բութայիս, Շուլաւէր, Դիլիջան Վելիսցիխէ և այլն, և ամեն մէկը այդ հասարակութենից և ուսուցիչներից մնացել է նրանով գոհ և ոչ թէ նա խռովութիւն է ցանում ուսումնարանների մէջ ինչպէս ճառաբանում է պ. Մկրտչեանը, այլ մեզ լաւ յայտնի է որ պ. Տէր-Յովհաննիսեանցը յատուկ գնալով Գանձակ հաշտացրեց տեղական տեսուչ պ. Եպիսկոպոսեանցին հոգաբարձութեան հետ և խնդրելով կարողացաւ համոզել պ. Եպիսկոպոսեանցին դարձեալ մնալ տեսուչ ուսումնարանի։

Մենք քաջ գիտենք որ պ. Տէր-Յովհաննիսեանցը Թիֆլիսում չունի ագդականներ, որոնց զեռեղում լինի ուսումնարաններում արժանաւորներին հեռացնելով, նա միայն ունի մի փեսայ որ նախկին վերատեսչից ընտրված և սիրած ուսուցիչ էր, այժմ էլ նա ուսուցիչ է։

Մենք կը խնդրենք պ. Տէր-Յովհաննիսեանից առաջ տանել իր գործը։

Յոյս ունեմ, պ. խմբագիր, որ պ. Մկրտչեանցի նամակը տպելուց յետոյ մեր նամակին ևս չէք գլանայ տեղ տալ ձեր լրագրի մէջ։

Ա. Մէլիք-Փաշայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՐԱՅԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ յուլիսի 4-ին հեղեղ է պատահել։ Բոլոր խանութները լցվել են ջրով։ Ծերերը պատմում են, որ այդպիսի հեղեղ նոքա դեռ չեն տեսել։ Հեղեղը 10 բոպէ տևեց և բաւական վնասներ տուեց։

—

Հով և անձրևային գարունքից յետոյ ամառն էլ ԹԻՖԼԻՍՈՒՄ բաւական հով էր անցնում։ Յանկարծ, յուլիսի 15-ին սկսվեցան այնպիսի անտանելի չոքեր, որ վաղուց է ունեցած չենք Թիֆլիսում։ Բաղդաւորապէս երէկ սկսեց կրկին քամի փչել։

—

Այս տարվայ ռուսաց թատրոնական խումբը ԹԻՖԼԻՍՈՒՄ չատ լաւ է կազմակերպված և աջող կերպով շարունակում է իր ներկայացումները։ Չէ կարելի չը հաւանել և բէպերտուարը, որի մէջ գլխաւոր տեղը բռնում են Օստրովսկու, Դիաչենկոի, Պոտէխինի և Մանոի պիէսաները։ Տիկին Բրիանսկայա-Կովրովա և պ. Պրավդին հիացնում են հասարակութիւնը իրանց գեղեցիկ խաղով։ Խորհուրդ կը տայինք խմբին երբէք օպէրէտներ չը ներկայացնել, որովհետև ձայների կատարեալ բացակայութեան պատճառով օպէրէտներ բոլորովին չեն աջողվում այդ խմբին։

—

Այս օրերս ԹԻՖԼԻՍԻ թատրոնում ներկայացվեցաւ Դիաչենկոի «Современная барышня» (Ժամանակակից օրիորդ) պիէսան, որ մեծ համակրութեամբ ընդունվեցաւ հասարակութենից։ Հեղինակը դուրս է բերում իր գրվածքի մէջ այն զզուանքը և նախապաշարմունքը որ դեռ տիրում է ռուս հասարակութեան մէջ հրէայ ազգաբնակութեան դէմ։ Հեղինակը յաղթող է հանդիսացնում առողջ դատողութիւնը և մարդկային զգացմունքը տիրող նախապաշարմունքից։

—

Կիրակի, յուլիսի 16-ին ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվող ժէրարի ցիրկը յայտնեց որ տալու է 25 ռուբլ նրան, ով մենամարտութեան մէջ կը յաղթի ցիրկի ամենաուժեղ գիմնաստին։ Հասարակութենից դուրս եկաւ մի Թիֆլիսցի հայ արուեստաւոր և տաս բոպէի չափ մենամարտութենից

քակրթական և լուսաւորական ոյժ, որ ունի ուղիղ և առանց կողմ թեքվող բարոյական արդարացում։

Երբ որ միայն Թիւրքիան էր Փոքր-Ասիայում մեր հակառակորդը՝ մենք կարող էինք դեռ այնքան չը շտապել. երբ որ ծուլութեան և անհոգութեան ներկայացուցիչների հետ գործ ունէինք՝ մեր դանդաղութիւնը դեռ կարելի էր մի կերպ ուղղել... Բայց երբ մի և նոյն երկրի վրա ոտք է դնում և տանիններորդ դարու փիւնիկեցին, երբ նա սկսում է բոպէներով և վայրկեաններով հաշվել իր ժամանակը, երբ նա չոգի ու ելեքտրականութիւն է մացնում իր գործունէութեան մէջ—դանդաղաշարժութիւնը ու ծուլութիւնը անմատացածին և անհնարին են դառնում այն ժողովրդի համար, որ կամենում է մի օր լոյս աշխարհ տեսնել, որ մի օր կամենում է իր նախնիներից կտակած և իր քրտինքով ու արիւնով ոռոգած երկրի վրա իշխան լինել։

Մեր ժողովրդի մէջ սովորութիւն կայ, որ երբ մի վտանգ, փորձանք կամ մի պատուհաս է վերահասնում, իսկոյն սկսում է իրան հաշիւ տալ թէ այդ ինչ մեղքերի պատիժն է ստանում նա։ Եթէ ներելի է՝ աշխատենք մենք ևս մի մեղք յարմարացնել այն պատուհասին, որ հասաւ մեզ Բերլինում, ուր բաւականացրին մեզ մի յօդուածով։ Թող ընդունենք թէ այդ մեղքը մեր անհոգութիւնն էր տարիների ընթացքում դէպի մեր ազգի խնդիրը և մեր անպատրաստականութիւնը նրան այն ոյժը տալու, որ ցանկալի էր գործի աջողութեան համար։ Թող դա լաւ օրինակ լինի մեզ համար, որ մենք աւելի մեծ ջանք ու աշխատանք դնենք մեր զարդացման և պատրաստութեան վրա։—Շուտ թէ ուշ հայերի երկիրը՝ հայերին պէտք է հասնի. մենք պէտք է մեր երկրի և աշխատանքի տէրը լինենք։ Դա ընդհանուր օրէնք է. մենք նրան ենթարկված ենք և առաջ ենք տանելու մինչև վերջ։ Հազար անդլիացիներ թող աչքի բիբերը աւելի ու աւելի բացեն մեր երկրի վրա.—մենք ենք նրա պատմական ժառանգները, նրա ներկայ հերկողները և մենք պէտք է նրա ապագայ տէրերը լինենք։ Կընդունենք նրանցից նրանց քաղաքակրթութիւնը, երեքպատիկ և տասնապատիկ կը վարձատրենք. բայց մի սորկութենից միւս աւելի վատթար սորկութեան չենք գնայ—մեզ չենք ծախի։

Բայց մի անգամ ևս նայենք աւազաժողովից մեզ նուիրած յօդուածի վրա. մինթէ յիրաւի նա մեզ ոչինչ չէ տալիս։ Բանն այն է, որ այնքան կարող է տալ, որչափ որ և մի համեստ ինքնավարութիւն և կարող է ոչինչ չը տալ։ Այս և այն ելքը կախված է մեզանից և Թիւրքիայից ու Եւրոպայից։ Հայերը իրաւունք ունեն պահանջել այս կամ այն վերանորոգութիւն, այս ու այն պակասութեան բարւոքումն. Թիւրքիան պարտաւոր է կատարել. Եւրոպան պէտք է հսկէ։ Եթէ այդ բոլորը միասին գումարես իբր թէ մի բան դուրս է գալիս. բայց եթէ իրապէս այդպէս կը լինի, ով մեզանից կարող է ասել հաստատապէս։

Պէտք է աշխատել տված իրաւունքների բարձր ու վերին աստիճանների վրա կանգնել միշտ. պէտք է maximum-ից չիջնել երբէք և աշխատել լայնացնել պահանջների ամփոփը աւելի ու աւելի։ Մի բանի մէջ Թիւրքիան երբէք չի խառնվի՝ ուսումնական մասի մէջ. դա ամբողջապէս հային է պատկանել. դրա ուժով պէտք է կրթել, ուսուցանել, դաստիարակել, քարոզել ու պատրաստել։ Պէտք է զարգացնել ուսումնական մասի միջոցով նոյնպէս հայի տընտեսական բոլոր կարողութիւնները, տալով նրա ձեռքը գիտութեան առատ և թանկագին գանձերը իբրև զօրաւոր գործիքներ երկրի արդիւնաբերութեան համար։ Պէտք է աշխատել, որ հայի բնակած երկրում հայը իրանից ուժեղ մըրցող չունենայ, որ իր երկրի հարստութեան վայելողը ինքը լինի. բոլորը ինքը ստանայ, որ կարողանայ իր անչափ մեծ կարիքները լցուցանել։ Նիւթական և մտաւոր գերազանցութիւնը միասին կազմում են այն, որ անուանվում է բարոյական ոյժ։ Բարոյական ոյժը երբեմն միայնակ կարողանում է յաղթել հակառակ զինուորական ճնշումը և նրա ազդեցութիւնը աւելի գերազանց է քան դաշտում կռիւը։ Բայց լաւ բարոյական ոյժ ունենալու համար հարկաւոր է ընդհանուր զարգացումն, լայնատարած կրթութիւն և մեծաքանակ ընդհանուր շահեր—որ ազգային կեանքի փոքր ի շատէ երևելի բոպէներում բոլոր ազգը միաբերան խօսի, միասին ոտքի կանգնէ և միահամուռ դիմադրաւի։ Թիւրքիան բոլոր իր հպատակների մէջ գուցէ հայերի բարոյական ոյժը զգացած և նկատած լինի աւելի մեծ կերպով և աշխատած չը դրդռել նրան իր դէմ։ Բէուֆ-փաշաների նման մարդիկը թող զարմանան, որ իրանց հպատակներին աւելի են յարգում չատ տեղերում քան իրանց։ Թող Բէուֆը չը մոռանայ, որ տէրութեան մարդիկ հայ լիազօրի վրա աւելի ուշադրութիւն դարձրին, քան իրան և թող նա՝, խոստովանելով իր զարմանքը և արտայայտելով իր զայրոյթը, չաշխատէ պատմութեան դէմ գնալ, կարծելով որ կարող է նրան գլխիվայր դնել և որտեղից կամենայ սկսել... Բէուֆների խումբը կարող է ուշացնել ապագան, բայց երբէք՝ ոչնչացնել։

Եւ մի դեսպանաժողով եթէ մի գրչի չարժվածքով կարող է հազար սպասելիքներ խորտակել և հազար ցանկութիւններ խանգարել—տասն անգամ աւելի գրիչներով անկարող է թուլացնել հաստատ բարոյական ոյժը։ Աշխատել, անխոնջ աշխատել և դարձեալ աշխատել—ահա ինչ է մնում մեզ։ Պարզել նպատակը, քննել արգելքները, ընտրել մարտնչելու միջոցները—վայրկեանները գնահատել—ահա գործի աջողութեան պայմանները։

Մի բան հաստատ գիտենք, որ հայերին բաւականութիւն չը տուին ոչ այն աչքի առնելով, որ նրանցից աւելի անպատրաստները աւելի ստացան, այլ պահանջների իրապէս կարևորութիւնը ու մեծութիւնը ի նկատի առնելով։ Հայերը բաւական չեն և սպասելու են առաջին յարմար դէպքին իրանց համար հաստատ իրաւունքներ պահանջել։ Մշտական խաղաղութիւն չէ կարելի ստեղծել ամեն կողմ թիքվող յօդուածներով և մի ամբողջ ազգ վիրաւորելով։ Այն ազգը, որ իր իշխողներից աւելի զարգացած է և բարոյապէս աւելի հարուստ՝ կը կարողանայ իր գոյութեան համար և յաջող մարտնչել։

Քալանթար

յետոյ յաղթեց ցիրկի ուժեղին։ Հասարակութիւնը ծափահարութիւններով ընդունեց այդ յաղթութիւնը։ Յաղթողը գնաց իր վարձը ստանալու համար և դուրս եկաւ հայհոյելով ցիրկի վարչութիւնը և կանչելով որ խոստացած 25 ռուբլի տեղ նրան տուեցին միայն 10 ռուբլի։ Հանդիսականները իրանց մէջ հանգանակութիւն անելով, իսկոյն լրացրին ցիրկի վարչութենից խոստացած գումարը։

—

ԲԱԳՈՒԻՑ մի պատահական թղթակից մեզ հաղորդում է, որ Խորէն վարդապետ Ստեփանէն վեհ. կաթողիկոսից հեռագրով կանչված է Ս. Էջմիածին։ Այսպէս յանկարծ կանչելու պատճառները յայտնի չեն։ Հայր Ստեփանէն պատասխանել է, որ Բագուում վերջին պատարագ կը մատուցանի և անյապաղ կուղևորվի Ս. Էջմիածին Նորին Վեհափառութեանը ներկայանալու համար։

—

Վերջապէս յուլիսի 19-ին, կէսօրից յետոյ ժամը 5-ին, սաստիկ չոք օրերից յետոյ քիչ անձրև եկաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ և հովացրեց եղանակը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Կրուշօվա սարից սահմանագիծը անցնում է այն կէտերով, որոնց որոշել է Սան-Ստեֆանօի դաշնագիրը մինչև Ադիակալի գիւղը, որ մնում է Թիւրքիային։

Այստեղից սահմանագիծը բարձրանում է Բէստէպէ-Դագի վրա, ձգվում է նրա ստորոտով, յետոյ իջնում է և կտրում է Մարիօսային Մուստաֆա-փաշա կամուրջից 5 կիլոմետր բարձր։ Յետոյ նա անցնում է ջրաբաժան գծով մինչև Կիւդելէր-Բայրա, որտեղից նա պտտում է արևելեան կողմը դէպի Սախար-Բայրա, կտրում է Տունջի գաշտը, ուղևորվում է դէպի Բուիւկ-Դերբենտ, որ Սունջակի պէս, սահմանագծից դէպի հիւսիս է մնում։ Բուիւկ-Դերբենտից նա դարձեալ գնում է Մարիցա և Տունջի գետերի մէջ եղած սահմանագծով, որին հետևում է մինչև Քայրիլարի բարձրութիւնը, որ Արևելեան Ռումելիային է պատկանում։ Այդտեղից սահմանագիծը անցնելով մի քանի գիւղերից և գետերից հասնում է Սև Ծովին։

Յօդ. 15) Նորին մեծութիւն սուլթանը իրաւունք կունենայ հոգալ ջրային և ցամաքային սահմանների պաշտպանելու համար, այդ սահմանների վրա ամրոցներ կառուցանելով և նրանց մէջ զօրքեր պահելով։

Արևելեան Ռումելիայում նեռքին կարգը կը պահի տեղական ժանդարմերիան տեղական միլիցիայի օգնութեամբ։

Այդ երկու զօրաբաժինների կազմելու ժամանակ, որոնց օֆիցէրներին պէտք է սուլթանը նշանակէ, ի նկատի կառնվի տեղի հաստատուն բնակիչների դատանութիւնը։

Նորին մեծութիւն սուլթանը պարտաւորվում է չը գործածել անկանոն զօրքեր, օրինակ բաշի-բուզուկներ և չերկէզներ սահմանի վրա եղած զօրատեղերում։ Այդ ծառայութեան համար նշանակված կանոնաւոր զօրքերը չեն կարող բնակեցնվել տեղական բնակիչների տներում։ Նրանց նահանգներից անցնելու ժամանակ զօրքերը երկար միջոց չեն կարող կանգնել այնտեղ։

Յօդ. 16) Արևելեան Ռումելիայի նահանգապետը իրաւունք կունենայ հրաւիրել թիւրքաց զօրքերին միայն այն ժամանակ, երբ նահանգի ներքին հանգստութեանը վտանգ կը սպառնայ։ Այսպիսի դէպքերում Վսեմափայլ Դուռը պարտաւոր է յայտնել պետութիւնների ներկայացուցիչներին այն շարժառիթները, որոնք նրան ստիպեցին զօրքեր ուղարկել։

Յօդ. 17) Արևելեան Ռումելիայի նահանգապետը կը նշանակվի Բ. Դրնից պետութիւնների հաւանութեամբ 5 տարի ժամանակամիջոցով։

Յօդ. 18) Ներկայ դաշնագիրը հաստատելուց յետոյ կը նշանակվի եւրոպական մանտաժողով Արևելեան Ռումելիայի գործերը կարգադրելու համար։ Այդ մանտաժողովը պէտք է երեք ամվայ ընթացքում կարգադրէ նահանգի վարչական, դատաստանական և ֆինանսական կազմակերպութիւնը ի նկատի առնելով վիլայէթների համար եղած օրէնքները և Կ. Պոլսի կոնֆերէնցիայի 8-դ նիստի ժամանակ արած առաջարկութիւնները։

Արևելեան Ռումելիայի համար արած վճիռների ժողովածուն կը կազմի կայսերական Ֆիրմանի նիւթ, որ Բ. Դուռը կը հրատարակէ և կը յայտնէ պետութիւններին։

Յօդ. 19) Եւրոպական մանտաժողովին կը յանձնվի համաձայնութեամբ Բ. Դրան հետ կառավարել նահանգի ֆինանսները մինչև նոր կազմակերպութեան մշակելը։

Յօդ. 20) Միջազգային պայմանագիրները, դաշնադրութիւնները և այլն, ինչ տեսակ էլ լինեն, որոնց կը կապէ Բ. Դուռը օտար պետութիւնների հետ, կը գործադրվեն Արևելեան Ռումելիայում նոյնպէս, ինչպէս օտոմանեան կայսերութեան միւս մասերի մէջ։ Օտարազգիներին, ինչ ծագումի էլ նրանք լինեն, տուած արտօնութիւնները կը յարգվեն այդ նահանգի մէջ։ Վսեմափայլ Դուռը պարտաւորվում է հսկել, որ այդ նահանգում գործադրվի ընդհանուր օրէնքը կրօնքի ազատութեան վերաբերութեամբ։

Յօդ. 21) Վսեմափայլ Դրան իրաւունքները և պարտականութիւնները Արևելեան Ռումելիայում գտնված երկաթուղիների վերաբերութեամբ անփոփոխ են մնում։

Յօդ. 22) Բոլգարիայում և Արևելեան Ռումելիայում մնացող ռուսաց զօրքերի թիւը պէտք է բաղկանայ վեց դիվիզիա հետևակ և երկու դիվիզիա հեծելազօրքերից, որոնց թիւը 50,000 աւելի չը պէտք է լինի։ Այդ զօրքերը կը պահվեն գրաւած երկրի հաշուով։ Այդ զօրքերը հաղորդակցութիւն կը պահեն Ռուսաստանի հետ ոչ թէ միայն Ռումինիայով, այլ և Սև Ծովի նաւահանգիստներով, Վարնայով և Բուրգասով, որտեղ կարելի է կազմել զօրքերի համար անհրաժեշտ պահեստներ։

Արևելեան Ռումելիայի և Բոլգարիայի ռուսաց կայսերական զօրքերից գրաւվելու ժամանակամիջոցը 9 ամիս է, հաշուելով դաշնագրի հաստատելու օրից։

Ռուսաց կայսերական կառավարութիւնը պարտաւորվում է հետևեալը երեք ամվայ ժամանակամիջոցում անցկացնել իր զօրքերը Ռումինիայից և բոլորովին մաքրել այդ իշխանութիւնը։

Յօդ. 23) Վսեմափայլ Դուռը պարտաւորվում է բարեխղճաբար մտցնել Կրիտ կղզու վրա 1868 թ. օրգանական կանոնագրութիւնը հարկաւոր և արդարացի համարված փոփոխութիւններով։

Մի և նոյն տեսակ կանոնագրութիւն, տեղական պահանջներին յարմարեցրած, բացի Կրիտ կղզուն շնորհած հարկից ազատ լինելը, կը մտցնվի եւրոպական Թիւրքիայի միւս մասերում, որոնց համար ներկայ դաշնագիրը առանձին վարչական կազմակերպութիւն չէ որոշել։

Նոր կանոնագրութեան մշակելը Բ. Դուռը կը յանձնէ մանտաժողովներին, որոնց մէջ տեղական բնակիչները լայն իրաւունքներ կունենան։ Ներքին կազմակերպութեան նախագիծերը և նրանց հետևանքները Բ. Դուռը, գործադրելուց առաջ պէտք է խորհրդակցէ Արևելեան Ռումելիայի համար նշանակած եւրոպական մանտաժողովի հետ։

Յօդ. 24) Եթէ Վսեմափայլ Դուռը և Յունաստանը չը հասնեն համաձայնութեան սահմանները ուղղելու հարցի վերաբերութեամբ, որ ցոյց է տուած Բերլինի դաշնագրի 13-դ պրոտոկոլի մէջ, Գերմանիան, Աւստրօ-Ունգարիան, Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան և Ռուսաստանը իրաւունք են պահում առաջարկել իրանց միջնորդութիւնը բանակցութիւնները թեթևացնելու համար։

Յօդ. 25) Բօսնիան և Հերցեգովինան կը գրաւվի և կը կառավարվի Աւստրօ-Ունգարիայից։

Որովհետև աւստրօ-ունգարական կառավարութիւնը չէ ցանկանում յանձն առնել Նովօբազարի սանջակի կառավարութիւնը, որը տարածվում է Սերբիայի և Զէրնոգորիայի մէջ հարաւ-արևելեան ուղղութեամբ մինչև Միտրովից, ուրեմն թիւրքաց իշխանութիւնները ինչպէս առաջ կը կառավարեն նրան։ Միայն, նոր քաղաքական կազմակերպութիւնը ապահովելու համար, Աւստրօ-Ունգարիան իրաւունք է ունենում պահել պահապան զօրքեր, և նոյնպէս ռազմական և առևտրական ճանապարհներ նախկին բօսնիական վիլայէթի այս մասի բոլոր տարածութեան վրա։ Այս նպատակով Աւստրօ-Ունգարիայի և Թիւրքիայի կառավարութիւնները մանրամասների վերաբերութեամբ համաձայնութիւն կը կապեն։

Յօդ. 26) Զէրնոգորիան անկախ է ճանաչվում Բ. Դրնից և այն բոլոր դաշնագրութիւն կապող պետութիւններից, որոնք դեռ ևս նրան չէին ճանաչել։

Յօդ. 27) Որոշվում է դաւանութիւնների հաւասարութիւնը (կրկնութիւն յօդ. 5)։

Յօդ. 28) Զէրնոգորիայի նոր սահմանները որոշվում են ներքև բացատրված կարգով։

Դիծը, սկսած Իլինօբրդօից և Կլբուկից դէպի հիւսիս, իջնում է Տրէբինիցի վրա դէպի Դրանցարեվ, որը մնում է Հերցեգովինային. յետոյ բարձրանում է այս գետի ընթացքով մինչև այն կէտը որը Զեկելեցայի հետ միաւորվելուց մէկ կիլոմետր ցածր է գտնվում, և այստեղից ամենակարճ գծով միանում է Տրէբինիցայի շրջապատող բարձրութիւններին։ Յետոյ նա ուղևորվում է դէպի Պիլատօվօ, թողնելով այս գիւղը Զէրնոգորիային, շարունակվում է յետոյ բարձրութիւններով հիւսիսային ուղղութեամբ, պահպանելով ոռքան կարելի է Բիլէկ-Կօրիտօ-Դացկօ ճանապարհից 6 կիլոմետր տարածութիւն մինչև Սօմինա—Պլանինա և Կուրիլա լեռան մէջ գտնվող անցքը, որտեղից նա գնում է դէպի արևելք Վրատկօվիցի միջով, թողնելով այս գիւղը Հերցեգովինային մինչև Օրլենեան լեռը։ Սըկսելով այս կէտից սահմանը, թողնելով Բավնօ Զէրնոգորիային, ձգվում է ուղիղ հիւսիս-արևելքի միջով և անցնելով Լիբերենիկ և Վօլեակ գագաթներով, իջնում է ամենակարճ գծով դէպի Պիվա, որին նա կտրում է և կցվում է Զրկվիչի և Նեգվինի միջով Տարային։ Այս կէտից նա բարձրանում է Տարայով մինչև Մօյկօվց, որտեղից հետևում է կողմնակի լեռների սրածայր կատարներով մինչև Սիսկօյցէր։ Սկսելով այս տեղից նա միանում է հին սահմանի հետ մինչև Սեկուլարէ գիւղը։ Այստեղից նոր սահմանը ձգվում է Մօկրայա Պլանինա սրածայր կատարներով. Մօկրայա գիւղը մնում է Զէրնոգորիային. յետոյ հասնում է Աւստրիայի գլխաւոր շտաբի քարտէզի 2166 կէտը, հետևելով գլխաւոր լեռնաշղթայով և ջրաբաժան գծով Լիմի միջով մի կողմից և Դրինի, ինչպէս և Կիէֆնի (Ցէմի) միջով միւս կողմից։

Յետոյ նա միանում է իսկական սահմանների հետ, որոնք բաժանում են կուչի-դրէկալովիչների ցեղը մի կողմից և կուչկի-կրայնի, ինչպէս և կլէմենտի և դրուդի ցեղերը միւս կողմից մինչև Պոդգօրիցի հովտը, որտեղից նա ձգվում է Պլավնեցայի վրա, թողնելով կլեմենտի, դրուդի և խօտի ցեղերը Ալբանիային։

Այստեղից նոր սահմանը անցնում է լճով Գօրից—Տօպալ փոքրիկ կղզու մօտով, իսկ Գօրից—Տօպալից նա անմիջապէս հասնում է լեռնաշղթաների սրածայր կատարներին, որտեղից նա հետևում է ջրաբաժան գծով Մեգիւրեդի և Կալիմեդի մէջ, թողնելով Մերկօվից Զէրնոգորիային և միանալով Ադրիատական ծովին Վ. Կրուչի մէջ։

Հիւսիս—արևմուտքի վրա սահմանը բաղկացած կը լինի այնպիսի գծից, որը գնում է ափից Սուզան և Զուբցի գիւղերի միջով և որը կցվում է Զէրնոգորիայի ներկայ հարաւ-արևելեան սահմանի ամենավերջին ծայրին Վ. բուուտա Պլանինի վրա։

Յօդ. 29. Անտիվարին իր հողով միանում է Զէրնոգորիային հետևեալ պայմաններով։

Այս հողից հարաւ գտնվող երկիրները, սահմանների վերոյիշեալ որոշումի հիման վրա, մինչև Բայանա, Դուլչինոյի հետ միասին վերադարձնվում են Թիւրքիային։

Սպիցայի ընկերութիւնը մինչև երկրի հիւսիսային սահմանը, որը նշանակված է սահմանների մանրամասն նկարագրութիւնների մէջ, կը միացնվի Դալմացիայի հետ։

(Կը շարունակվի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, յուլիսի 11-ին հետևեալը. «Ահա թէ ինչպէս է հաղորդում կիսապաշտօնական «Turquie» լրագիրը Միտիլէնա կղզու վրա պատահած յուզմունքի մասին։ 70 աւազակներից բաղկացած մի խումբ աւերում է լեռները Միտիլէնում, և այս պատճառով հաղորդակցութիւնները և երկրագործական պարապմունքները դադարած են։ Շատ բնակիչներ թողնում են իրանց տները գիւղերում և պաշտպանութիւն են որոնում քաղաքում։ Միտիլէնում նոյնպէս տեսան աւազակների մի խումբ, որոնք եկել էին այս կղզին ուրիշ երկրներից. նրանք լաւ զինուորված են և հագած ունեն յունական ազգային շորեր։ Քաղաքի զեներալ գուբերնատորը զինուորներ ուղարկեց աւազակներին հալածելու համար և հրամայեց բնակիչների մէկ մասը զինաւորել, որպէս օգնական զօրք։ Նոյնպէս տեղական ոստիկանութիւն է կազմվում այս անկարգութիւնների ժամանակ պօլիցիական ծառայութիւնը կատարելու համար։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲՐՕԴԻ, 17/29 յուլիսի։ Առաւօտեան 10 ժամից սկսած բարձրացած է բօսնիական ափի վրա աւստրիական դրօշակը։

ՎԻԵՆՆԱ, 17/20 յուլիսի։ Երցհերցոգ Յովհան Սալվատոր առաջինը ոտք կոխեց բօսնիական հողի վրա և բարձրացրեց աւստրիական դրօշակը։ Գլխաւոր զօրաբաժինը ֆէլդմարշալ Ֆիլիպովիչի առաջնորդութեամբ վաղը կուղևորվի դէպի Բրօդի։ Մինչև այժմ ոչ մի տեղ աւստրիական զօրքերը ընդդիմադրութեան չեն հանդիպել։

Կ. ՊՕԼԻՍ, 17/29 յուլիսի։ Սուլթանը վաւերացրեց Բերլինի դաշնագիրը։

ՎԻԵՆՆԱ, 18/30 յուլիսի։ Աւստրիական առաջապահ զօրքի Սավա գետի վրայով անցնելուց յետոյ, ներկայացաւ զօրքին մի թիւրքաց մայոր քաղաքական առաքելութիւններով, որպէս զի յանձնի աւստրիական զօրքի հրամանատարին դրաւոր գօկումենտ։ Երբ որ աւստրիացիները չը կամեցան ընդունել գօկումենտը, թիւրքերը դրեցին նրան գետնի վրա, հրաժարվելով յետ առնել նրան։ Մօտ 10 ժամին առաջապահ զօրքը անցաւ սահմանը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինձ յանձնված լինելով **ՊՈՒԼԻՍԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ** *վարձել, խնդրում եմ ցանկացողներին պայմանների մասին խօսելու դիմել* «ՄՇԱԿԻ» *խմբագրատունը. իսկ օտարաբաղաքացիք կարող են իրանց ցանկութիւնը յայտնել նամակով: Ընդարմաց համարվածներին չի պատասխանվի:*

Ց. Մելիք-Յակոբեանց

Վերին-Ագուլիսի երկսեռ դպրոցների համար պահանջվում է երեք վարժապետ, առաջինը ռուսաց լեզուի համար, երկրորդը թուաբանութեան համար, իսկ երրորդը աշխարհագրութեան, ընդհանուր պատմութեան և բնական գիտութեան համար: Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրատունը պ. Մելիք-Յակոբեանի մոտ պայմանների մասին խօսելու, որը յիշեալ դպրոցների հոգաբարձութեան կողմից այս իսկ յանձնարարութեամբ ուղարկված է Թիֆլիս:

Հոգաբարձու Մինաս Արասխանեանց

Պերճ Պրօշեանցը յայտնում է իր «ԿՈՒՍԱԾԱՂԻԿ» վիպասանութեան յարգոյ բաժանորդներին, որ գիրքը դուրս կը գայ մինչև օգոստոսի վերջը և այն ժամանակը ամէն ոք կը ստանայ իր համարը:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ յայտնում է, որ Քաղաքային բժշկական հիմնարկութիւնների կանոնագրութեան բժշկական բաժնի կանոնների 83 համեմատ հիւանդները ընդունվում են հիւանդանոցում ամեն օր, ամառ 7-ից, իսկ ձմեռը 8-ից մինչև 10 ժամը, բացի այն դէպքերից, երբ ընդունելութիւնը չէ կարելի յետաձգել: 2—3

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՆՈՒԹՈՒՄ ծախվում է ՆՈՊԻՏԱԿ ԲՈՒՄԱՋԷՑԱ զինուորականների չորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ չորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԹԻՆԱՑԻ ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) 1¼ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՅԻՏՐԱՊ մագնեցի 1½ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, սղոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ գիւժինը 3 ր., ԳՐԻՉՆԵՐ արդը 15 կ. և բարձր, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻՍԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մակենաօշներ, երեխաների չորեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօդնօսներ 10 կ. և բարձր, բամ, կօնեակ, պօրտ-վէյն, խերես և անգլիական օղի 1½ ր., ՊԱՆԻՐ չեստեր 60 կ. և բարձր: Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը:

15—20

ՀԱՒԱՔՈՒՄ ԵՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ որոնց նշանակութիւնը և արժանաւորութիւնը մեր ազգի համար մանրամասն կը բացատրեմ իր ժամանակին: Առ այժմ 300-ի չափ հաւաքած ունենալով՝ դիմում եմ դէպի մեր բանասէրները խոնարհաբար խնդրելով աւելի մեծ ծանօթալ ժողովրդի հետ, նրանցից հաւաքեն և ուղարկեն ինձ մանաւանդ բուն ազգային հանելուկները, որոնց հետ պէտք է լինի հանելուկների դիւրիար բառերի եւ մտքի բացատրութիւնը: Աշխատութիւնը չը խնայեցողների անուն և ազգանունները կը տպագրուին գրքում և կուղարկվեն նրանց համար մի մի օրինակ ձրի:

Գրիգոր քահանայ Մանդակունի:

Իմ հասցէն՝ Тифлисъ. Авлабаръ. священику Теръ Григору Мандакуни.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄԸ ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. ԵՒՏՈՒՇԵՎՍԿԻ.—*Ժողովածու թուաբանական խնդիրների յարմարեցրած հայ ուսումնարանների համար I մասն—ամբողջ թւեր, 3-դ տպագրութիւն հիմնական փոփոխութիւններով և յաւելմունքներով. փոխադրութիւն Մարտ. Սիմէոնեանց: 1878 թ. գինն է հատով առնողների համար 50 կ. գումարով—45 կ.:*

2. ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ *առաջին տարի—գրել և կարդալ աշխատասիրութիւն Ղ. Աղայեանցի, գինն է 15 կ.:*

3. ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ *Ծնողաց և ուսուցիչների համար—Ղազար. Աղայեանցի. գինն է 20 կ.:*

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԵՈՒՄ

ՀԱՏ ԷԺԻՇՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ, ԵՎ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Երևանայ սուրբ ԳԷՈՐԳԵՆԵԱՆ ՕՐԻՈՐԴՈՒՑ ԴՊՐՈՑԻ *երեք դասատան համար հարկաւոր են մի* ՈՒՍՈՒՑԻՉ *շաբաթական 24 դասով ռուսաց լեզուից երկրորդ դասատնում, թուաբանութենից, աշխարհագրութենից և ընդհանուր պատմութենից, և մի* ԿԱՐԳԱՊԱՀ ՎԱՐԺՈՒՀԻ *շաբաթական 16 դասով ռուսաց լեզուից պատրաստական և առաջին դասատուների և ձեռագործութեան համար իւրաքանչիւրը տարեկան 500 բուբլ ռոճիկով. ցանկացողները թող շտապեն յայտնել դպրոցի տեսչութեան այս հասցէով.*—Въ Эривань Протоіерею Іосифу Мелянцу.

3—3

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 *ժամից մինչև* 2 *ժամ*

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ *օրերից:*

ՅՈՒԼԻՍԻ 20 — ՏԵՂԵԿԱՑՈՒՑ — ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յուլիսի 19-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	8	5
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1300	—
Վիգրիչնի 0/0 առաջի փոխառութեան տոմ. 100 „	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի „	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ամէ 112 գլ.	121	—
Դուբեժի բարաթը.	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	300	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօկով	7	80
„ միւս տեսակը.	7	70
„ չաքարաւազը.	6	20
„ տրանդիաը.	6	50
„ մաքրը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից.	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուչի	8	—
„ թարաքամի	4	20
Ալիւր Շորագալու	1	40
„ Երևանի.	—	—
Գարին.	1	20
Մոմը բնաճարպի (стеар.)	13	20
Մետաքս Նուխվայ	180	—
Կախեթունը.	100	—
Կոկոնը Նուխվայ (рас.)	45	—
Ֆրիզոնը (լատը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մոկօի.	27	—
„ լիվանի	22	—
„ մարտինիկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա.	4	
Գերմանիա.	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողականների ընդունելութիւնը ցերեկվայ և դիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Լուսնձին սենեակներում ամիսը 30—50 բուբլ. կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական.

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան. Բժշկապետ Ա. ԱՆՕՎ.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խաւն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Բիօն	6. 47	
Փօթի	9. 40	

	առաւ.
Փօթիից	9. 13
Բիօն	12. 13
Միխայլօվօ.	5. 39
Գօրի.	7. 5
Թիֆլիս.	9. 31

	առաւ.	երեկոյեան
		1 37
		4 8
		7 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի.	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Բիօն.	9.	6. 75	3. 75
Փօթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր. Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիսչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ.

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:

Երկուշաբթի. Վէրմիչէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ:

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Բէյլիս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան:

Չորեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային:

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Գավրոնսկիյ կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակտ վենեբական և կաշու հ. Օբրէիտ ատամնացաւեր:

Ուրբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Բէյլիս աչքերի հ. Բակտ կրծքային և ջղային հիւանդութիւններ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՇՈՒՇԻ. Թ. Մ. Ստացանք վեց բուբլ, կուղարկենք «Մշակի» յուլիսից:

—ԿԱԽ. Ց. Մ. Մ. կարդացէք վերևի պատասխանը:

—ԴԻԼԻՋԱՆ Ն. Ա. կուղարկենք ձեր համարները և պարտնին մինչև նոյեմբերի վերջը:

—ԴԱՒԻԹԻՃ. Երեք հայ երիտասարդներ. Ստացանք 39 բուբլ յօգուտ Արարատեան ընկ., նամակը կը տպենք:

—ԲԱԳՈՒ. Մեր թղթակիցներին: Գրեցէք մանրամասն տեղեկութիւններ վերջին անցքերի մասին:

—ՎԱՂԱՐՇԱՊԱՏ. Մեր թղթակիցներին. Անյապաղ հաղորդեցէք մեզ ինչի է կանչված այդտեղ Խ. Վ. Ս.

Дозволено Цензурою 19 Іюля 1878 г. Тифлисъ — Типографія Мартиросіанца — Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ